Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի §Արաքսի Զ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց¦ ՊՈԱԿ-ի կենսաբանության (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում ՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է՝ (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ §Հանրակրթության մասին¦ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրությունը(Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները , (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույքը տեղի կունենա դեկտեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին Արմավիրի մարզի Արաքսի Զ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Արաքս, Մասիս Խաչունցի փողոց, շենք 21:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 11-24-10 հեռախոսահամարով: